Պարույր Սևակ

Զարմացնում եմ

Ահավասիկ այս խնձորը՝
Մեղրածորը,
Կամ այս դեղձը՝
Անձեռակերտ-անստեղծը...
Սա մի պատառ կերպափոխված արեգակ է.
Զովություն է այստեղ դարձել նրա տաքը,
Հոսուն հուրը ստացել է մի հստակ ձև,
Շողն ու լույսը փոխվել գույնի, համ ստացել:
Եվ այս՝ գիտե՞ք ինչի՛ համար,
Միայն նրա՛, որ մեզ համար
Արեգակը դառնա հարմար.
Որ այս դեղձը պոկենք հիմա,
Աղվամազոտ դունչը շոյենք,
Այս խնձորով նախ հիանանք՝
Ա՛յս կողմ շուռ տանք,
Ա՛յն կողմ շրջենք
Եվ - թե հանկարծ սրտներս ուզի -
Ոչ այս - ոչ այն՝ բռնենք կրծենք:
Տարօրինակ բան չեք կարծո՞ւմ,
Որ արև է մարդը կրծում...

20.XI.1957թ.

Մոսկվա